Հաստատում եմ
Դպրոցի տնօրեն /Հ.Ալեքսանյան/
31.08.2022թ.

<< ՍԻՍԻԱՆԻ Հ.5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ
ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼ
Լ.ՆԱԶԱՐՅԱՆ

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը:
2. Պարտադիր կրթության կենսագործում:
3. Ուսումնական հաստատության սովորողների ֆիզիկական, հոգեկան և սոցիալական առողջությանն ուղղված աշխատանքներ:
4. Աշխատանք դասղեկների հետ:
5. Աշխատանք մանկավարժական կադրերի հետ, որակավորման բարձրացում:
6. Կազմակերպական մանկավարժական աշխատանք:
7. Աշխատանք Աշակերտական խորհրդի հետ:
8. Աշխատանք Ծնողական խորհրդի հետ:
9. Ֆինանսատնտեսական գործունեություն ուսումնանյութական բազայի ամրապնդում:
10. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքներ:

## 1. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը

| Հ/Հ | Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետ | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1. | **Դասղեկի աշխատանք**<br>Օգնել դասղեկներին կազմելու դաստիարակչական աշխատանքների աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման:<br>ա/ Դասղեկներից պահանջել աշխատանքային պլան՝ հիմքում ամրագրելով հետևյալ դրույթները. ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ, աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն:<br>Դաստիարակության հիմքում դնել հիմնական հանրակրթական դպրոցի շրջանավարտի նկարագրի պահանջները:<br>բ/Շաբաթը 1 անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին:<br>գ/ Հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունները:<br>դ/ Կիսամյակը 1, 2 անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողով: Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական թեմաներով զեկուցումներ:<br>ե/ Յուրաքանչյուր դասարանում ստեղծել ծնող-խորհուրդ (բաղկացած 3-5 անդամից), ապահովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը: Սահմանել բաց դռների օր, ապահովել ծնող-ուսուցիչ կապը: | Սեպտեմբեր<br><br><br><br>Ուստարվա ընթացքում<br><br><br><br><br><br><br><br><br><br>Ուստարվա ընթացքում<br><br><br><br>Ուստարվա ընթացքում<br><br>Ուստարվա ընթացքում<br><br><br><br>Սեպտեմբեր | ՄԿԱ տեղակալ ԴԱԿ<br><br><br><br><br><br><br><br><br><br>Տնօրենություն, դասղեկներ, դասվարներ |
| 2. | **Գեղագիտական դաստիարակություն** | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ տեղակալ, |

| | | | |
|---|---|---|---|
| | ա/ Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ:<br>բ/ Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները:<br>գ/ Կանաչապատել դասասենյակները, միջանցքները, դպրոցի բակը: | | դասղեկներ |
| 3. | **Ֆիզիկական դաստիարակություն**<br>ա/ Կազմակերպել սպորտլանդիաներ I-IX դասարաններում:<br>բ/ Անցկացնել միջդասարանական սպորտային միջոցառումներ: Դրանք կազմակերպել բարձր մակարդակով, նախապես իրազեկ դարձնել դասղեկներին և աշակերտներին:<br>գ/ Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել <<Առողջության օր>>:<br>դ/ Կազմակերպել աշակերտների այցելությունը <<Սիսիան >> բժշկական կենտրոն: | Սեպտեմբեր, հոկտեմբեր, ապրիլ-մայիս<br><br>Մայիս<br><br><br>Ուստարվա ընթացքում | ՄԿԱ տեղակալ, ԴԱԿ<br>Դասղեկներ, ուսուցիչներ,<br>Դասղեկներ, Ֆիզկուլտուրայի ուսուցիչներ, Բուժքույր<br><br>ՄԿԱ տեղակալ, Բուժքույր, բժիշկներ, դասղեկներ |
| 4. | **Ռազմահայրենասիրական աշխատանք**<br>ա/ Կազմակերպել միջոցառումներ, պատրաստել պատի թերթ նվիրված հայ ազգի հերոսներին:<br>բ/Այցելություն Արցախի անկախության, Հայաստանի սահմանների պաշտպանության համար զոհված մարտիկների հուշարձաններին:<br>գ/Անցկացնել քաղպաշտպանությանը նվիրված դասեր:<br>դ/Այցելություն Սիսիանի N զորամաս: | Ուստարվա ընթացքում<br><br><br>Ուստարվա ընթացքում<br><br><br>Ուստարվա ընթացքում<br>Ուստարվա ընթացքում | Զինղեկ, դասղեկներ, ՄԿԱ տեղակալ<br><br>Զինղեկ, դասղեկներ, ՄԿԱ տեղակալ<br><br>Զինղեկ, դասղեկներ, ՄԿԱ տեղակալ<br>Զինղեկ, դասղեկներ, ՄԿԱ տեղակալ |
| 5. | **Աշխատանքային դաստիարակություն**<br>ա/ Բարձրացնել աշխատանքային ուսուցման, աշակերտների մասնագիտական | <br><br>Ուստարվա ընթացքում | ՄԿԱ տեղակալ ԴԱԿ |

| | | | |
|---|---|---|---|
| | կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների որակը:<br>բ/ Աշակերտների ուժերով կազմակերպել դպրոցում աճող ծաղիկների խնամքի գործը, կատարել ծառատունկ: | | ՄԿԱ տեղակալ դասղեկներ |
| 6. | **Գրադարանային աշխատանք**<br>ա/ Օգնել գրադարանավարին կազմելու և հաստատման ներկայացնելու տարեկան աշխատանքային պլանը:<br>բ/ Կազմակերպել միջոցառումներ նշանավոր և հիշարժան տարեդարձերի և տարելիցների վերաբերյալ:<br>գ/ Ստեղծել <<Պատանի ստեղծագործող>>-ի ակումբ: Նպաստել երեխաների ստեղծագործական մտքի զարգացմանը: Ի հայտ բերել տաղանդավոր աշակերտների: | Օգոստոս – սեպտեմբեր<br><br>Ուստարվա ընթացքում | ՄԿԱ տեղակալ, Գրադարանավար |
| 7 | Կատարել դասալսումներ, նպատակային այցելություններ, դիտարկումներ: Դասղեկի ժամերի վերահսկում: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ տեղակալ |
| 8. | **Առարկայական օլիմպիադաներ**<br>ա/ Կազմակերպել և անցկացնել առարկայական օլիմպիադաների փուլերը | Դեկտեմբեր – մարտ | Ուսմասվար<br>ՄԿԱ տեղակալ |

# 2. Պարտադիր կրթության կենսագործում

| Հ/Հ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամեկտը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1. | Հնարավորության սահմաններում օրենքով նախատեսված կարգով, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովել անվճար դասագրքերով: | Սեպտեմբեր | Տնօրենություն<br>ԴԱԿ |
| 2. | Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք, անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքով սահմանված կարգով: | | ՄԿԱ տեղակալ<br>ԴԱԿ, Բուժքույր,<br>Դասղեկներ,<br>Դասվարներ |
| 3. | Ուշադրության կենտրոնում պահել ետ մնացող աշակերտներին: Նրանց հետ տանել լրացուցիչ աշխատանք: | Ուստարվա ընթացքում | Տնօրենություն<br>Դաղեկներ |
| 4. | Աշխատանք տանել V-IX դասարանների դժվար դաստիարակվող երեխաների և նրանց ծնողների հետ: Հաճախակի անցկացնել հանդիպումներ ոստիկանության Միսիանի բաժնի աշխատողների հետ | Ուստարվա ընթացքում | Տնօրենություն<br>Դաղեկներ, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Մանկական գծով անչափահասների տեսուչ |
| 5. | Գտնել պարտուսից դուրս մնացած երեխաների: | Ուստարվա ընթացքում | Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ |

## 3. Ուսումնական հաստատության սովորողների ֆիզիկական, հոգեկան և սոցիալական առողջությանն ուղղված աշխատանքներ

| Հ/Հ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամեկտը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1. | Աշխատանք տանել հաստատությունում ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը կանխարգելու ուղղությամբ | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, Դասղեկներ, բուժքույր |
| 2. | Կազմակերպել ծնողների իրազեկմանն ուղղված միջոցառումներ, տեղեկատվական զրույցներ երեխաների խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության, բարձրացման , ինչպես նաև բռնության, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով տեղակալ |
| 3. | Սովորողների գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով կազմակերպել ՄԻԱՀ/ՁԻԱՀ-ի և կորոնավիրուսի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ՝ ՄԻԱՀ/ՁԻԱՀ-ի և կորոնավիրուսի փոխանցման ուղիների և կանխարգելման մասին: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, Դասղեկներ, բուժքույր |
| 4. | Կազմակերպել և անցկացնել միջոցառումներ, զրույց-բանավեճեր, կլոր սեղաններ՝ ուղղված բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեմ , հանդուրժողականության և համագործակցության ձևավորման ուղղությամբ: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, Դասղեկներ, բուժքույր |

## 4. Ներդպրոցական վերահսկողության համակարգ

| Հ/Հ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամեկտը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1. | Ստուգել պարտադիր կրթության օրենքի սահմանադրական պահանջի կատարման վիճակը դպրոցում և արդյունքները քննարկել տնօրենության նիստում կամ մանկավարժական խորհրդում: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն,ՄԿԱ գծով տեղակալ, |

| | | | |
|---|---|---|---|
| 2. | Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքը: Արդյունքները քննարկել դասղեկների նիստերի ժամանակ: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն, ՄԿԱ գծով տեղակալ, |

## 5.Աշխատանք մանկավարժական կադրերի հետ, որակավորման բարձրացում

| Հ/Հ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամեկտը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1. | Հաշվի առնելով հիմնական դպրոցի աշակերտների տարիքային առանձնահատկությունը, պարբերաբար կազմակերպել բանավեճեր , քննարկումներ, կլոր սեղաններ, գիտագործնական կոնֆերանսներ և այլն, որոնք էլ ավելի կնպաստեն աշակերտների ինքնակրթությանը և հոգևոր մտքի զարգացմանը: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով տեղակալ, առարկայական մասնախմբերի նախագահներ, ուսուցիչներ |
| 2. | Հասնել այն բանին, որ մանկավարժական ողջ կոլեկտիվը իր գործունեությամբ բավարարի ուսուցիչներին ներկայացվող ընդհանրական պահանջներին: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով տեղակալ |

## 6. Կազմակերպչական-մանկավարժական աշխատանք

| Հ/Հ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամեկտը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1. | Ուսումնական մասնաշենքի յուրաքանչյուր հարկում, բակում, ձևավորված սրահներում կազմակերպել ամենօրյա աշակերտական և ուսուցչական հերթապահություն | Մշտապես | Տնօրեն, ՄԿԱ գծով տեղակալ, |
| 2. | Դասասենյակները, կաբինետները, ուսումնական գույքը և սարքավորումները նախապատրաստել նոր ուստարվան | Օգոստոս, սեպտեմբեր | Տնօրենություն |
| 3. | Վերանորոգել աշակերտական հնամաշ և վնասված դասագրքերը | Ուստարվա ընթացքում | Դասղեկներ, գրադարանավար |
| 4. | Կազմակերպել աշակերտների ինքնակառավարման աշխատանքները ըստ դպրոցի աշակերտական խորհրդի խորհրդի կանոնադրության: | սեպտեմբեր | ՄԿԱ գծով տեղակալ |
| 5. | Դասղեկների հետ վերջնականապես ճշտել սոցիալապես անապահով, որը և միակողմանի ծնողազուրկ երեխաների ցուցակը և հնարավորության սահմաններում ապահովել անվճար դասագրքերով: | սեպտեմբեր | Տնօրեն, ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ, ծնողխորհրդի նախագահ |
| 6. | Ուշադրության կենտրոնում պահել դպրոցի աշակերտական խորհրդի աշխատանքները: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ |

## 7.Աշխատանք աշակերտական խորհրդի հետ

| Հ/Հ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամէկտը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1. | Դպրոցում ստեղծել աշակերտական խորհուրդ: | սեպտեմբեր | Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ, ԴԱԿ |
| 2. | Աշակերտական խորհրդի ուժերով ստեղծել հետաքրքրությունների ակումբ: | Սեպտեմբեր | Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ,աշակերտական խորհուրդ |
| 3. | Ամրապնդել աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող,աշակերրտ-աշակերտ և ուսուցիչ-ուսուցիչ հարաբերությունները: | Ուստարվա ընթացքում | Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ |
| 4. | Հետնել դպրոցում աշակերտների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: | Ուստարվա ընթացքում | Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ |
| 5. | Հետևողական աշխատանք տանել, որպեսզի ԱԽ-ի աշխատանքները նպաստեն երիտասարդ սերնդի, նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը: | Ուստարվա ընթացքում | Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ, ԴԱԿ |
| 6. | Ամիսը մեկ անգամ հրավիրել աշակերտական խորհրդի նիստ | Ուստարվա ընթացքում | Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ |
| 7. | ԱԽ աշխատանքները վարել ըստ դպրոցի ԱԽ-ի կանոնադրության | Ուստարվա ընթացքում | Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ |
| 8. | Մասնագիտական  կողմնորոշում | ապրիլ-մայիս | Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ |

## 8.Աշխատանք ծնողների հետ

| Հ/Հ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամէկտը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1. | Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ | Ուստարվա ընթացքում | Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ |
| 2. | Ընտրել 2022-2023 ուստարվա դպրոցի ծնողական խորհրդի կազմը և ներկայացնել տնօրենին | սեպտեմբեր | Տնօրենություն |
| 3. | Կազմել ծնողների համար անցկացվող զրույցների և զեկուցումների թեմատիկ պլան | սեպտեմբեր | Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, |

| | | | |
|---|---|---|---|
| 4. | Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական, դաստիարակչական և արտադասարանական աշխատանքներին | Ուստարվա ընթացքում | Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ,դասղեկներ |

# 9.Ֆինանսատնտեսական գործունեություն և ուսումնանյութական  բազայի ամրապնդում

| Հ/Հ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1. | Աշխատանք տանել ուսումնական գույքի, սարքավորումների, ուսումնական տեխնիկական  միջոցների, դիդակտիկ պարագաների և  այլ նյութերի օգտագործման և պահպանման, հաշվառման ուղղությամբ: | Ուստարվա ընթացքում | Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ |
| 2. | Ապահովվել շենքի ջերմային, լուսային և օդային ռեժիմը: Կանոնավոր վիճակում պահել հակահրդեհային միջոցները: | Ուստարվա ընթացքում | Տնօրենություն, զինղեկ, շտաբի  պետ |
| 3. | Հսկողություն սահմանել սովորողների սննդի կազմակերպման նկատմամբ | Ուստարվա ընթացքում | Տնօրեն,Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ, դասվարներ, ծնողխորհուրդ, բուժքույր |

# 10.Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքներ

| Հ/Հ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1. | Կատարել ԿԱՊԿՈՒ  երեխաների մակարդակի գնահատում | Ուստարվա ընթացքում | Տնօրենություն, ՍՏՄԱԿ, հոգեբան, ծնողներ |
| 2. | ԿԱՊԿՈՒ աշակերտներին վկայագրելուց հետո կազմել կանխարգելիչ միջամտության պլան հետագա աշխատանքների իրականացման համար: | Ուստարվա ընթացքում | Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ, դասվարներ, ծնող, բուժքույր, հոգեբան, ուսուցչի օգնական |